

**ՀԱՅՅԵՐԵՆ ԵՐԿՈՒ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ**

ՀԳԱ թղթակից անդամ Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Միջնադարում Բալկանյան թերակղզու տարածքում գոյություն են ունեցել բազմաթիվ հայկական համայնքներ, որոնց վերաբերյալ վկայությունների ենք հանդիպում բյուզանդական պատմողական աղբյուրներում, ինչպես և պատրիարքական, կայսերական փաստաթղթերում, հողերի առուվաճառքի պայմանագրերում և այլ կարգի նյութերում: Ոչ սահմանափակ թիվ են կազմում նաև ուշ միջնադարի վիժագիր արձանագրությունները, գլխավորապես տապանագրեր, որոնցից բազմաթիվ նմուշներ են պահպանվել Կրետեի Հերակլիոն և Խանիա քաղաքներում, ինչպես և Թեսալիայում¹:

Վերջին տասնամյակներում Հարավսլավիայի տարածքում հայտնաբերվել են երկու վիժագիր արձանագրություններ, որոնք հնարավորություն են տալիս ինչ-որ չափով լրացնելու մեր պատկերացումները Բալկանյան թերակղզու այդ մասում գոյություն ունեցած հայության վերաբերյալ:

Հարավսլավացի հայտնի հնագետ-ճարտարապետ Ջուրջե Բոշկովիչը և նրա երկու ուսանողները՝ Միլան Ստանիսլավևիչը և Մուխարեմ Մախիչը 1947 թ. ամռանը Բելգրադից մի փոքր հյուսիս-արևելք գտնվող Պետրովեց քաղաքից 10 կիլոմետր արևելք գտնվող Վիտովնիցի վանքի մոտ ժանոթացել են սերբերեն և հայերեն լեզվով գրված երկլեզվյան մի արձանագրության: Սերբերեն բնագիրը նախկինում հրատարակված է եղել Լ. Ստոյանովիչի կողմից: Զ. Բոշկովիչը 1948 թ. հուլիսին Փարիզում կայացած բյուզանդագետների միջազգային 6-րդ կոնգրեսի աշխատանքների ժամանակ արձանագրության հայերեն բնագիրը ցույց է տվել Սիրարփի Տեր-Ներսեսյանին, որը և վերծանել ու կարդացել է այն: Զ. Բոշկովիչը իր հոգովում տալիս է արձանագրության՝ հայերեն լեզվին չտիրապետող օտարի համար լարմանալիորեն ճիշտ վերծանությունը, ինչպես և Սիրարփի Տեր-Ներսեսյանի ընթերցանության սերբերեն թարգմանությունը²:

Սերբերեն և հայերեն բնագրերը բովանդակությամբ գրեթե նույնն են, հանգամանք, որ հնարավորություն է տալիս սրբագրելու և տալու հատկապես այնտեղ հանդիպող հատուկ անունների ճիշտ ընթերցումը: Քանի որ Զ. Բոշկովիչը իր հոգովածում չի տալիս հայերեն արձանագրության վերծանությունը, այլ դրա գծագիրը միայն, ստորև բերում ենք այն, տալով մեր վերծանությունը:

«[ՅԱՆ]ՈՒՆ ՀԱԻՐ ԵՒ ՈՐԴՈՅ ԵՒ ՄԲ ՀՈՅԳՈՅՆ (sic!) ԵՍ ԼԱՏՈՆ ՊԱ-
[ՊՈՒԿԱ]Յ ՈՐԴԻՆ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻ ՅԱՆՈՒՆ ՄԲ ԱԿՈՐԱՅ ՀԱՅՐ»

¹ Տե՛ս Հ. Մ. Բարթիկյան. Կրետե կղզու Հերակլիոն քաղաքի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու հայերեն տապանագրերը.— «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1, էջ 102—110: Նույնի՝ Նյութեր գաղութահայ պատմության.— «Երաբեր հասարակական գիտություններ», 1987, № 9, էջ 74 և հտ.:

² Дж. Бошковић. Средњовековни споменици североисточне Србије. Српска Академија Наука. Старијар, Орган Археолошког Института САН, нова серија, кн. I. Београд, 1950, с. 185 и сл.

³ Ինչպես տեսնում ենք, «ՀԱՅՐ» բառով է վերջանում արձանագրության երկրորդ տողը. երրորդ տողի սկիզբը շարված է: Ս. Տեր-Ներսեսյանը կարդում է «ՀԱՅՐ», Բոշկովիչի թարգ-

Այնուհետև. ՅԱԿՈՒԲԻ փոխարեն ունենք ԱԿՈՐ, որը սերբերեն բնագրում բերված է ЪКОВ (Յակով) ձևով:

Արձանագրությունը հետաքրքրություն է ներկայացնում հայոց անձնանունների ուսումնասիրության առումով: Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» լադո անունը բացակայում է:

Սուրն արձանագրությունը⁶, որ արժեքավոր է նաև հնագրության առումով, վկայությունն է այն բանի, որ XIII դարի սկզբին նշված վայրում եղել է հայկական, ըստ երևույթին բազմամարդ, համայնք: Եկեղեցու շինության անհրաժեշտությունը այդ մասին է խոսում:

Հայերեն երկրորդ արձանագրությունը 1966 թ. հայտնաբերել է Հարավ-ուլավիայի Մակեդոնիա հանրապետության հարավում, հունական սահմանից ոչ հեռու գտնվող Պրիլեպ (Պերլեպե) քաղաքի ժողովրդական թանգարանում:

ՀԱՅԵՍՐԱԾԱԾՅԱՆԱՔ
ԻՐՈՒՄԱՆՈՒՄԵՆՈՒՄ
ԻՆՆԱՐԱՆ
ԼՄԵԼՈՅԵԼ M AIA
ՈՐԳԵՐՈՒՄ
ՍԲՔԱՆԱՐԱՆԻ
ՆԵՂԱՅԻՐՈՂՈՒՄ KAI Σ
ԲԱՆԻ ՀԱՅԵՔ
ԲԲԵՍՈՒՄ
ԲԱՆԱՆՈՒՄ
ԱՐԱՆՈՒՄ NOYA
ՆԵՐԶԱՆԱՐԱՆ
ԵՒ ԵՒՆԱՆ
ՍԵՆՈՒՄ MHTP
ԵՒ ԵՒՆԱՆ
ՈՐԳԵՐՈՒՄ
ՍԲՔԱՆԱՐԱՆ

Նի հնագիտական արշավախումբը Ս. Դիմիտրիոսի հին եկեղեցում, Պրիլեպի վարո՞ գյուղում XIII դարի շենքի քարերի մեջ: Այն սպիտակ մարմարի մի բեկոր է՝ 55 սմ բարձրությամբ, 45 սմ լայնությամբ և 19 սմ հաստությամբ, որի վրա կա հունարեն գեղեցիկ տառերով գրված անտիկ շրջանի արձանագրություն: Նրանից պահպանվել է շորս տող, յուրաքանչյուր տողում 5-ական տառ: Ահա հունարեն այդ արձանագրության մարմարի վրա փորագրված է հայերեն արձանագրությունը: Հայտնաբերողները սկզբնական շրջանում որոշել են, որ արձանագրությունը թի հունարեն է, ոչ լատիններեն: Բայց հայերեն «ա»-ն կարդալով «III», «Ո»-ն «I», «Ս»-ն «L» կարծել են, որ այն կարող է կիրիլիցայով գրված լինել: Անգամ կարծիք էր հայտնվել, որ «ա» տառը կարող է գլագոլիցա լինել: Մի խոսքով այն համարվել է սլավոնական անցման գիր: Կարծիք էր հայտնվել, որ արձանագրությունը գուցե պրոտոբուլղարական է, անգամ եբրայական, քանի որ տեղում գոյություն է ունեցել հին հրեական համայնք: Ուսումնասիրող Վ. Մոշինը իր այդ նկատառումները գեղեցիկ 1969 թ. կայացած մի գիտաժողովում, որպես եկեղեցու շինության առաջ քաշելով և այն միտքը, որ չի բացառվում, որ արձանագրությունը հայերեն է, մի բան, որ հաստատեց գիտաժողովի աշխատանքներին մասնակցող սլավոնագետ Անդրեյ Ստեպանովիչը կվովր: Նույն թվա-

⁶ Այս արձանագրության մասին տե՛ս նաև Հ. Խալիպիսյանի հոդվածը ՊՐԶ, 1971, № 2:

կանի աշնանը հեղինակը, լինելով լենինդրադում, արձանագրությունը ցույց է տվել Կարեն Յուզբաշյանին, վերջինս այն ուղարկել է Մաշտոցի անվան Մատենադարան, Օ. Եգանյանին, որի ընթերցումը և թվագրումը Կ. Յուզբաշյանը 1971 թ. Վ. Մոշինին է ուղարկել՝ Օ. Եգանյանի ընթերցման իր ուսման թարգմանությամբ: Վ. Մոշինը 1978 թ. լինելով Երևանում, հանդիպել է Օ. Եգանյանին, որը հաստատել է իր ընթերցումն ու թվագրումը: Կ. Յուզբաշյանի ուսման թարգմանության «մակեդոներեն» թարգմանությունը Վ. Մոշինը հրատարակեց իր հոդվածում⁷: Այդ եռահարկ թարգմանությունը մի կողմ թողնելով, տալիս ենք արձանագրության բնագիրը, որ, ի տարբերություն նախորդի, գրված է ոչ մեծատառերով: Այս դեպքում էլ պիտի նշեմ, որ հրատարակիչը թեև հայերեն չի իմացել, այն վերծանել է բավականին հաջող:

[Գո]հութին սբ ածածնայ տաք
ի թուականութեան ՈՅԱ

տուն⁸ սբ առ-
աքելոցն և
որք երգէք ի
սբ քաւարանիս
մեղաց թողու-
թին հայցէք
ի Քէ սուտ
քահանայ տր
Աթանասի ի
մէջ ճգնարա-
նիս յիշատ-
ակն իւր նա-
և ձեզ տրն
ողորմեսցի
ամէն:

Եթե Օ. Եգանյանը արձանագրության թվականը կարդացել է ՈՅԱ (651), ապա նա չէր կարող այն մ. թ. 1002 թ. վերծանել, ինչպես գրում է Վ. Մոշինը, քանի որ 651+551 տալիս է 1202 և ոչ 1002 թ.: Վերջին թիվը պարզապես հոդվածագրի թյուրիմացության արդյունք պիտի համարել:

Այսպիսով XIII դարի հենց սկզբում գոյություն ունեցող Ս. Առաքելոց հայկական եկեղեցին ևս վկայում է, որ Պրիլեպի շրջանում եղել է բազմաթմարդ հայկական համայնք:

⁷ Владимир Мошин. Прилепско-Варошпот таинствен натпис на една античка плоча. Институт за истражување на старословенската култура—Прилеп. Споменици засредневековната и поновата историја на Македонија. Том IV. Грамоти, записи и друга документарна граѓа за манастирите и црквите во Прилепската област. Скопје, 1981, с. 509—513.

⁸ Արձանագրության մեջ բաց է թողնված բալը: Հավանաբար՝ «շինեցաւ»:

ДВЕ АРМЯНСКИЕ ЛАПИДАРНЫЕ НАДПИСИ НА ТЕРРИТОРИИ ЮГОСЛАВИИ

Член-корр. АН Армении Р. М. БАРТИКЯН

Резюме

На территории Балканского полуострова в средних веках существовало множество армянских поселений, о чем свидетельствуют разнохарактерные византийские источники, а также армянские надписи на могильных плитах. Обнаруженные в последние десятилетия на территории Югославии две армянские строительные надписи свидетельствуют о наличии армянских поселений и в данном географическом ареале. Одна из двух надписей обнаружена на северо-востоке Сербии и является билингвой, написана она в 1218 г. на сербском и армянском языках. В ней говорится о построении церкви во имя апостола Петра и епископа Якова (Нисибинского) неким Ладом, сыном Папука в память о своих родителях. Вторая надпись обнаружена на юге республики Македонии, в городе Прилеп, датируется она 1202 г. В ней говорится о построении (?) церкви святых Апостолов священником Афанасием. Факт строительства упомянутых церквей—свидетельство наличия многолюдных армянских поселений в указанных местностях.